ցան նոցա տալ փոխարէն Տիմիթի։ Եւ 'ի սահմանել ժամանակի հաշուութեան՝ Լատին իշխանք, որք էին թուով իրրեւ 20, ոչ կարէին համաձայնիլ 'ի վերայ այսոցիկ պայմանացս։ Սակայն արտունչ զօրաց, որք տաղտկացեալ էին յերեսաց պատերազմի, դեղերելով յայնոսիկ կողմանս զամս երիս և ամիսս ինչ· միաբանեցան ամենեքեան, եւ Մէլիք Ֆեամիլ յանձն առ կատարել զխնդիր նոցա տալով պատանդ զորդի իւր զՄէլիք Սալէհ, հնգետասան ամեայ· և էառ 'ի նոցանէ զիշխանն Պաղտմայիդայ և զայլս։ Յետ այնորիկ դուսարեցաւ 'ի ժողով ընդ եղբարս և ընդ մերձաւորս իւր, և առեալ զՏիմիթի յանձն արար Խալամայ, և մուտ փառօք 'ի քաղաքն, և արձակեալ զիշխանս յիւրաքանչիւր տեղիս իւրեանց, դարձ արար ինքն 'ի Գահիրէ· (1222)։

Պատմի 'ի ձեռագիրս ինչ վասն Յովհաննէս վարդապետի պատահեալ 'ի սմին ժամանակի· Տե՛ս Նե՛ խ Պարոնն Կիրակոսի Վարդապետի· Երես 211։ Հ· Մ· Զամչեան· Հատ· Գ· Երես 243· 244։ Սա եկեալ յերուսաղէմ յուխտ իջեւանս՝ կալաւ 'ի վանս Ս· Յակոբայ· եւ 'ի տանի Յայտնութեան գնաց 'ի Յորդանան, եւ մկրտեաց զայլազգի ոմն երկու որդւովք նորին, որք էին յաշխարհէն Պարսից· յետ պատմելոյ նոցա զահաւոր տեսիլն, և բերեալ յերուսաղէմ հաղորդեցոյց զնոսա 'ի կենարար Մարմնոյ և Արեան Տեառն, և ապա մեկնեալ գնացին նոքա յարեւմուտս։

Դարձեալ պատմէ նա ինքն Յովհաննէս զտեսիլ կրօնաւորի ուրումն, պատահեալ յեկեղեցւոջ Ս· Յակոբայ, յաւուրս փակակալութեան Պօղոս վարդապետի, յաւուր տանի Աւետեաց Ս· Կուսին։ Դարձեալ գնալն 40 Հայ ուխտաւորաց 'ի լեառն Սինէական, որ և ինքն Յովհաննէս էր ընդ նոսա, և իջեւանս կալեալ 'ի վանս Յունաց, եւ ապա ելին 'ի լեառնն կացեալ անդ պահօք և ճգնութեամբ զաւուրս ինչ, և ապա իջին անտի ուրախութեամբ (1223)։

Տէր Աբրահամ և Տէր Առաքել վարդապետք կամ եպիսկոպոսք Հայոց եռուն կազմել զփայտեայ միջնադուռն եկեղեցւոյն Բեթղեհէմի մանրաքանդակ յօրինուածովք ծաղկանց և նկարիւք խաչաց, որպէս երեւի մինչեւ ցայսօր հնութեամբ իւրով· 'ի վերին կողմն մոյ փեղկին եղեալ